2023-2024ուստարի

Խ.Աբովյանի անվան հայկական

Պետական

մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների)հետ՝սաների ծնողների աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Կատարող՝«Արարատ մարզի Նոյակերտի մանկապարտեզ»ՀՈԱԿ

Դաստիարակ՝Աննա Ազատյան

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1.Մանկապարտեզ ընտանիք համագործակցության հիմնահարցերը

1.1Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները

.....5

1.2Մանկապարտեզ-ծնող համագործակցության կազմակերպման ձևերը.....7

Գլուխ 2.Հետազոտական մաս

2.1 Հետազոտության նպատակը,ընթացքը.....9

2.2Ծնող-դաստիարակ համագործակցության ապահովման անհրաժեշտությունը ՆՈՒՀ-ում.....10

Եզրակացություններ……14

Գրականություն……16

Ներածություն

Ընտանիքը երեխայի համար հասարակական փորձի աղբյուր է:

Կրթական բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների հետ զուգահեռ կարևորվում է ընտանիքի դերը երեխայի դաստիարակության և զարգացման գործում:

Երեխաների սոցիալական զարգացման վրա ներազդում է ընտանիքը, որը հանդիսանում է գիտելիքների,արժեքների վերաբերմունքի դերերի և սովորույթների ուղեկիցը սերնդից սերունդ:

Սոցիալական զարգացումը երեխայի անձնավորության զարգացման հուսալի երաշխիքն է,այն ուղղված է երեխայի անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների ձևավորմանը:

ՆՈՒՀ-ի մանկավարժական աշխատակիցների և սաների ծնողների արդյունավետ փոխշահավետ աշխատանքից կախված է նախադպրոցական տարիքի երեխաների հետագա զարգացումը:

Համագործակցությունը ինչպես ծնողներին,այնպես էլ դաստարակներին հնարավորություն կտա էլ ավելի լավ ճանաչելու երեխաներին և կդառնա ամուր հիմք,որպեսզի բոլոր ջանքերը ուղղվեն երեխաների դաստիարակության անձնավորության ձևավորմանը:

Ժամանակակից ընտանիքներում ծնողները հաճախ բախվում են երեխաների դաստիարակության խնդիրներին:

Մանկապարտեզը և ընտանիքը երկու կառույցներ են որոնք կանգնած են ապագայի ակունքներում և նրանց փոխադարձ կապիմ հետևանքների կրողը երեխան է :

Կարևոր է ,որ մանկապարտեզի և երեխայի պահանջները լինեն միասնական:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ սաների ծնողների հիմական մասը չի տիրապետում երեխաների զարգացման ու դաստիարակության խնդիրներին:

Նրանք հիմնականում հենվում են մանկապարտեզում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքի վրա:

Այս ամենով է պայմանավորված ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ներկայացնել ՆՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի սաների և ծնողների հետ իրականացվող աշխատանքի և այդ գործընթացում ծնողների մասնակցությունն ու հնարավոր ներգրավվածությունը:

Ելնելով նպատակից առաջարկում ենք հետևյալ խնդիրները.

- ✓ *Ուսումնասիրել և վերլուծել համապատասխան տեսամեթոդական գրականություն*
- ✓ *Ներկայացնել դաստիարակի կողմից սաների ծնողների հետ համագործակցության կազմակերպման ձևերն ու միջոցները*
- ✓ *Վերլուծել և ամփոփել իրականացված համագործակցության արդյունքները:*

Աշխատանքը բաղկացած է ներածությունից,2գլուխներից՝տեսական և հետազոտական եզրակացություններից և գրականությունից:

Հետազոտական աշխատանքը գործնականում արժևորվում է մշակված մանկավարժական տերմինները,որոնք ապահովում են մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցության արդյունավետությունը:

Գլուխ 1.Մանկապարտեզ ընտանիք համագործակցության հիմնահարցերը

1.1Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները

Դաստիարակության գլխավոր ինստիտուտ է հանդիսանում ընտանիքը , որի դերն անփոխարինելի է երեխայի զարգացման, նրա սոցիալականացման գործընթացներում:

Այն,ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում , ամրապնդվում և պահպանվում է նրա մոտ հետագա ամբողջ կյանքի ընթացքում: Յ.Ա. Կոմենսկին ասել է . «Մարդու մեջ միայն հուսալի և հաստատուն է այն, ինչ նրա մեջ ներծծել են կյանքի առաջին տարիներին»:

Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է,ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:

«Ընտանիքը երեխայի մթնոլորտն նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը , նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները,բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը

և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին» (Ռաֆֆի): Յ.Ա. Կոմենսկին նշում էր , որ «Մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր, արձակուրդ»:

Վերջապես, «երեխան ընտանիքի հայելին է» սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում:Ընտանիքի գործառույթներն ու խնդիրները բազմաթիվ են: Ընտանիքի հիմնական գործառույթներն են

- ✓ *Վերարտադրողական*
- ✓ *Սոցիալ տնտեսական*
- ✓ *Սոցիալականացման*
- ✓ *Հոգեթերապեֆտիկ*
- ✓ *Դաստիարակչական*

Ընտանիքի կարևորագույն գործառույթները հիմնավորում են մարդկության գոյատևման ընտանեկան ձևի առավել պաշտպանվածությունը հետևաբար նաև նպատակահարմարությունը:

Ընտանիքում են դրվում երեխայի մտավոր, ֆիզիկական , հոգևոր_բարոյական , էկոլոգիական , գեղագիտական դաստիարակության հիմքերը, նրա մշակութային զարգացումը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային , բարոյական որակներով ու վարքագծով, կարևորվում են նրանց արժեքային կողմնորոշումները, որոնք երեխայի համար ընդօրինակման առաջին նմուշներ են :

Երեխաները ընդօրինակելով ծնողների վարքագծային մոդելները ներքնայնացնում են դրանք ,

համապատասխանեցնում իրենց անձին , որի հիման վրա էլ ձևավորվում է վարքագիծը , արժեքային զգարժեքները երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողն ու ժառանգորդը, որոնց հիման վրա էլ ձևավորվում է նրա աշխարհայացքը:

Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերը հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման ու զարգացման գործում:

Հոգեբան Ա.Ն. Լեոնտևը նշում է, որ <<նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զ գայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում է ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ:

Բոլոր հասարակություններում ընտանիքի ինստիտուտը հոգեբանական պաշտպանությունը: Այս գործողությունը տարբեր հասարակություններում տարբեր չափով է իրականացվում :

Ընտանիքը պետք է ինչպես էմոցիոնալ պահանջմունքների, այնպես էլ ֆիզիկական պահանջմունքների լայն հավաքակազմ բավարարի, ինչպես օրինակ սննդի և ապաստարանի պահանջը:

Հուզակության աջակցություն գործառույթը ենթադրում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի սիրո , ջերմության, փոխադարձ հասկացողության հոգեբանական պաշտպանության կարիքների բավարարումը:Մասնագետները կարծում են որ երեխայի մոտ հուզական և վարքային դժվարությունները առաջացնում են վերը թվարկվածների բացակայության պատճառով:

Այս գործառույթների իրականացումը կարծես ընտանիքից անցում է կատարվում դեպի մանկապարտեզ և արդեն այս սոցիալական միջավայրում է կատարվում այդ

գործառույթների իրականացումը:Թեև մանկապարտեզն անկարող է ամբողջովին միայնակ իրականացնել այդ գործընթացը.որն էլ ամեն պարագայում փաստում է ծնող-մանկապարտեզ համագործակցության սերտ կապի անհրաժեշտությունը:

Ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի երեխաների հաջողության համար:Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին նրա զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

Երեխաները որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են մանկապարտեզում կազմակերպվող կրթական գործընթացին ավելի լավ արդյունքների են հասնում.ստանում են ավելի լավ գովեստներ,նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով ,բարեհամբույր են մանկապարտեզի նկատմամբ:

Երբ ծնողներն օժտված չեն լինում մասնագիտական գիտելիքներով,այդժամ ընտանեկան դաստիարակության խնդիրների և

Հանդիպող դժվարությունների հաղթահարմանը օգնում է մանկապարտեզը:

Ընտանեկան դաստիարակությունը մանկավաթժական համակարգ է `ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ:

1.2Մանկապարտեզ- ծնող համագործակցության կազմակերպման ձևերը:

Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի սերտ համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.

- *Նախադպրոցական կրթական հաստատության ներքին նեգործությունների հանդեպ բաց լինելու:*
- *Նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու*

  Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:

  Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները:

  Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը:Մանկապարտեզը պատրաստ պիտի լինի համագործակցելու միկրոսոցիումի `համայնքի բոլոր սոցիալական

ինստիտուտների հետ:Պարտադիր չէ մանկապարտեզի համագործակցությունը տարածքի դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցների մանկական ակումբների հետ:

Յանկալի է և չափազանց արդյունբավետ մանկապարտեզի փոխադարձ կապը մշակույթային հաստատությունների հետ(գրադարաններ,թատրոններ,թանգարաններ):

Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը:

Այսինքն մանկապարտեզը նաև պետք է նաև պատրաստլինի համագործակցելու բոլոր սոցիալական օղակների հետ:

Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար փոխադարձ կապի ջևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են:Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները,որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից:

Նախադպրոցական մանկավարժությունն առաջարկում է նաև համագործակցության ժամանակակից եղանակներ:

Այսօր չափազանց կարևորվում է մանկապարտեզում ծնողական անկյան ստեղծումը,որը նախատեսվում է որպես ծնողների `մանկավարժի և միմյանց հետ հանդիպման վայր:

Ծնողական անկյունը նաև ժամանցի,մեկ գավաթ սուրճ խմելու վայր է ,որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ազատ և անկաշկանդ մթնոլորում պարզապես զրուցելու,հարցեր քննարկելու համար:

Մանկավարժական աշխատողների և ծնողների համագործակցությունը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխային,դիտարկել նրան,տեսնել նրան տարբերնիրավիճակներում և ,հետևաբար,օգնել հասկանալու նրա անհատական առանձնահատկությունները,երեխայի կարողությունների զարգացումը:

Աճող սերնդի դաստիարակության և կրթության հաջողությունները պայմանավորված են բոլոր սոցիալական ինստիտուտների միջև հաստատվող փոխվստահելի և փոխպայմանավորված համագործակցությամբ:

Գլուխ 2 Հետազոտական մաս

Հետազոտության նպատակը ընթացքը

Հետազոտության նպատակն է ապահովել մանկավարժական

աշխատողների և սաների ծնողների համագործակցության արդյունավետությունը

երեխաների ուսումնադաստիարաչական գործընտացի լիարժեք կազմակերպման

համար:Հետազոտությունը կատարվել է ,« Նոյակերտի» ՀՈԱԿ-ում:Մեր հետազոտությունը իրականացրել ենք միջին խմբում:

Մեր ՆՈՒՀ-ում և հետևաբար խմբում ծնողների հետ համագործակցությունը մշտապես կատարել և կատարում ենք բոլորիս հայտնի ավանդական եղանակներով՝

- ✓ *ծնողական ժողովներ*
- ✓ *անհատական զրույցներ*
- ✓ *համատեղ գործունեություն ըստ անհրաժեշտության:*

Պետք է նշել, որ ծնողների մասնակցությունը ծնողական ժողովներին ավելի մեծ է, կարելի է ասել ակտիվորեն մասնակից են լինում ցանկացած թեմայի քննարկմանը:

Անհատական զրույցները օրվա և աշխատանքային գործունեության անբաժանելի մասն են կազմում, քանի որ յուրաքանչյուր օր,ընդունեության ընթացքում և երեխային տուն ճանապարհելիս իրականացվում են անհատական զրույցներ, պարզաբանում թե

մեր,և թե ծնողին անհանգստացնող խնդիրներն ու հարցերը կապված երեխայի անհատական առանձնահատկությունների հետ:

2.1Ծնող-դաստիարակ համագործակցության ապահովման ՆՈՒՀ-ում.

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կապը ծնողի հետ երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողների հետ տարվող աշխատանքի բարելավման բոլոր միջոցները ամենից առաջ պետք է ուղղվեն նախադպրոցական հաստատության և ընտանիքի համագործակցության ամրապնդմանը երեխաների համակողմանի դաստիարակության և զարգացման գործում:

Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիրակու թյան գործին նրանց ներդրումներից:Չպետք է մոռանալ,որ ծնողների հետ հաջողված յուրաքանչյուր համագործակցությունը մեծ արժեք ունի, որից երեխան միայն կշահի: Ծնողների հետ ցանկացած շփման ձև պետք է զուգակցել նրանց նկատմամբ ցուցաբերված մեծագույն հարգանքով: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:

Համագործակցության արդյունքում թե ծնողը թե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների ,հետաքրքրությունների համակրանքների ու հակակրանքների մասին: Դրական արդյունք կստանանք այն ժամանակ ,երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք:Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկակապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները:

Մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ դիրքորոշումը նպաստում է երեխայի դաստիարակությանը համակցված,փոխպայմանավորված և փոխպատասխանատու գործողությունների միջոցով:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի

դաստիարակության իրական պայմանները այն արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործընթացին ,հանդես գա մանկավարժական

գործընթացի սուբյեկտի , մանկավարժի օգնականի աջակցի դերում, հրաժարվելով պահանջատիրոջ կարգավիճակից:

Որքան ավելի սերտ և արդյունավետ լինի ուսումնական հաստատություն- ընտանիք կապը, այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները ուսումնառության և դաստիարակության ընթացքը ավելի դրական ու արդյունավետ կազմակերպելու առումով:

Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են:Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակներ,որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից:Նախադպրոցական հիմնարկները ծնողների հետ աշխատանք կազմակերպելիս օգտագործում են բազմազան անհատական և կոլեկտիվ ձևեր:Ընտանիքի հետ համագործակցության ձևերն են.

1. Այցելություն տուն-Մանկավարժական անձնակազմից որևէ մեկը՝հիմնականում դաստիարակը այցելում է տուն տեսնելու և ճանաչելու երեխային նրա ընտանեկան պայմանները:
2. Երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում ընկած ժամանակը օգտագործվի ծնողների հետ ոչ պաշտոնական հաղորդակցություն ապահովելու համար:
3. Հեռախոսային զանգերը՝
   Կարելի է հատուկ նպատակով զանգահարելկամ ամիսը մեկ անգամ զանգահարել յուրաքանչյուր ընտանիքի՝պարզապես կապը պահպանելու համար:

4.Ծնողական ժողովներ՝

Ժողովներն այն պաշտոնական հանդիպումներն են,որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը,ծնողներին հնարավորություն են տալիս կիսելու իրենց գաղափարներն ու մտահոգությունները:

Ժողովները կարող են օգտակար լինել երեխայի անհատական պլանների կազմման և քննարկման համար:Եթե ժամանակի պակասի պատճառով չի հաջողվում անմիջական հաղորդակցումը ապա,ընտանիքի և մանկավարժների միջև կապ հաստատելու համար կարող են օգտագործվել գրավոր հաղորդակցման որոշ ձևեր:

Գրավոր տեղեկությունը հաղորդելիս պետք է վստահ լինենք ,որ մյուս կողմը ստացել է գրությունը:Գրավոր հաղորդակցման տեսակներից են՝

ա.Բրոշյուրները կարող են օգնել ծնողներին ծանոթանալ կրթական ծրագրին:Դրանք կարող են հակիրճ նկարագրել ծրագրի էությունը և նպատակները և ընդհանուր տեղեկություն տալ դրա մասին:

բ.Ամեն շաբաթ մի առանձին գրություն կարելի է ուղարկել յուրաքանչյուր ընտանիքի՝տեղեկացնելու համար իրենց երեխայի նախընտրելի գործողության տեսակի մասին,ինչպես նաև որևէ այլ տեղեկություն հաղորդելու համար:

գ.Ոչ պաշտոնական գրությունները՝մանկավարժական կազմը կարող է երեխայի հետ տունուղարկել կարճ գրություններ,որպեսզի ընտանիքի անդամներին տեղեկացնի երեխայի հմտությունների ձեռքբերումների կամ որևէ այլ գործունեության մասին,ինչպես նաև շնորհակալություն հայտնեն ուսումնական հաստատությանն աջակցելու համար:

Ընտանիքի անդամները ևս կարող են մանկավարժներին ուղարկել գրություններ՝

իրենց երախտագիտությունը հայտնելու կամ որևէ խնդրանք հաղորդելու համար:

դ.Պատի տեղեկատվական թերթեր՝

Պատ տեղեկատվական թերթը կարող է օգտակար լինել ընտանիքներին միշտ թարմ տեղեկություն հաղորդելով նրանց ժողովների և հատուկ իրադարձությունների , ամենօրյա պարապմունքկի, ընտանների բաշխման ցանիքների համար նախատեսված միջոցառումների , ինչպես նաև ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

ե.Առաջարկությունների տուփեր

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը,մտահոգությունները, առաջարկությունները և հարցերը գրավոր ներկայացնել մանկավարժական

կոլեկտիվի անդամներին առաջարկության տուփի միջոցով որը տեղադրվում է միջանցքում:համագործակ

Ընտանիքի հետ համագործակցության ձևերից են նաև բաց դռների օրերը,կոնսքուլտացիաները դասախոսություններ,հարց ու պատասխաններ երեկոները երիտասարդ ծնողների դպրոցները և հատուկ կազմակերպվող գիտական կոնֆերանսները ծնողներին հուզող թեմաների շուրջ:

Երիտասարդ ծնողների հետ կազմակերպվում են նաև սեմինար-պրակտիկումներ:Բավական արդյունավետ են համատեղ միջոցառումները ,որոնք կկարող են տարբեր նպատակների ծառայել:

Կոնֆերանսներն անցկացվում են ընտանեկան դաստիարակության պրոբլեմներ քննարկելու համար:Դրանց նախապատրաստմանը ներգրավվում է լայն ծնողական ակտիվը:

Ընտանիքում երեխաների դաստիարակության գործին մեծապես օգնում են ծնողների համար կազմակերպվող դասախոսությունները,որոնք կարող են նվիրվել դաստիարակության ,երեխաների կյանքի և առողջության պահպանման տարբեր հարցերին:

Ծնողների հետ հետաքրքիր և օգտակար աշխատանքի ձև կարող են դառնալ Հարց ու պատասխանի երեկոները:Հարցերը նախապես հավաքում,դասակարգում են և որոշվում է ամեն մի երեկոյի գլխավոր ուղղությունը:

Եզրակացություն

Մանկապարտեզը պետք է ապահովի մանկապարտեզի և ընտանիքի փոխգործակցությունը երեխաների դաստիարակության հարցում , ինչպես նաև օգնի ծնողներին մանկավարժական որոշակի գիտելիքների ձեռքբերման և մանկավարժական մշակույթի ձևավորման գործընթացին :

Երեխաների դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպման , նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերի լուծումը մանկապարտեզի և ընտանիքի փոխգործակցության դրդապատճառները նրանց ընդհանուր նպատակներն են:

Կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացության .

- ✓ *Ընտրված թեմայի շուրջ տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում բացահայտեցինք ընտանիքի կողմից իրականացվող գործառույթները , նրա դերը , մանկապարտեզ ՆՈՒՀ համագործակցության հնարավոր եղանակներն ու դրանց իրականացումը:*

- ✓ *Ներկայացվել են դաստիարակի կողմից ծնողների հետ հնարավոր համագործակցության կազմակերպման ձևերը: Պարզեցինք որ համագործակցության եղանակներից են անհատական խմբային զրույցները, ծնողական ժողովները , կլոր սեղանները , բարության օրերը և այլն: Հարկ է նշել, որ բոլորն էլ կարող ենք կիրառել այնպես, որ ներգրավեն ծնողին գործընթացի մեջ:*
- ✓ *Իրականացրած փորձարարական հետազոտության արդյունքում զգալիորեն բարձրացավ ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման մակարդակը , հստակեցվեցին երեխաների զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները , ծնողների վերաբերմունքը ներառական կրթության,ինչպես նաև երեխայի հասակակիցների , ընտանիքի անդամների փոխհարաբերությունների վերաբերյալ:*

Գրականություն

1. *Ս.Ա Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն բուհական դասագիրք» Երևան 2008թ*

   2.Ա. Հովհաննիսյան «Դաստիարակենք միասին»Երևան 2014թ.

   3.Ս.Մարության «Նախադպրոցական մանկավարժության հիմունքները»Երևան 2005թ.

   4.Նախաշավիղ-5.2016թ.

   5.Ծնողական կրթության ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ,Երևան 2005թ.

   6.Հ.Խաչատրյան «Մանկան հոգեբանություն»Երևան 2022թ.

   7.«Այնքան ծանոթ և անծանոթ մեր երեխան» Երևան 2006թ.